## ՍԵՂՐԱԿԵԱՆ, ԱՐԻՍՏԱԿԷՍ եպիսկոպոս.—«ԱՄՈՒՍՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ»։ Մոսկուա, տպ. Բարիուդարեանցի, փոքր քառածալ, 222 երես, տաս. № 12, գինն է 1 ր. 50 կոպէկ։

---

Արիստակէս եպիսկոպոս Սեղրակեան այս գրքով ոչ այնքան լուծում է հաս ու չը հասի և պսակի լուծման խնդիրները գիտնական տեսակէտից, որքան ընթերցողի ուշադրութիւնն է դարձնում այն իրար հակասող վճիռների վերայ, որ կատարուել են ցայժմ հոգևոր իշխանութեան կողմից վերաբերեալ հաս ու չը հասի և պսակի լուծման խնդիրների կամ պատահած դէպքերի առիթով։ Այս կարևոր գրքին վերադառնալու իրաւունքը վերապահելով, մենք չտապում ենք միայն գրքի առաջին ընթերցումից մեր մի քանի տպաւորիւնները հաղորդել «Մուրճ»-ի ընթերցողներին, ի նկատի ունենալով այն բոլորին հասկանալի հետաքրքրութիւնը, որ կապուած է հեղինակի առաջադրած խնդիրների հետ։ Հաս ու չը հասի խնդրի նկատմամբ հեղինակը, տեսութիւն տալով այլ և այլ ազգերի և ցեղերի զանազան ժամանակներում գոյութիւն ունեցած օրէնսդրութիւններին, անցնում է հայկական եկեղեցական օրէնսդրութեանը և առաջ բերում մի կողմից եկեղեցական ժողովների վճիռները և միւս կողմից՝ եկեղեցական հայրերի վարդապետութիւնը և հրահանգները։ Արիստակէս սրբազանը ընդունում է պարտաւորիչ միմիայն եկեղեցական ժողովների վճիռները, մինչդեռ եկեղեցական հեղինակների վարդապետութիւնները, օրինակ Գ.ոչ Մխիթարի դատաստանագիրքը, և կամ նոյն իսկ կաթողիկոսների, որպէս օրինակ Ներսէս Շնորհալու՝ հրահանգները նա համարում է ոչ պարտաւորիչ։ Բացառութիւն նա թոյլ է տալիս այնպիսի մեծ հեղինակութիւնների համար, որպիսիք են «Թաղէոս և Բարդուղիմէոս առաքեալները, Սուրբ Գրիգոր Լուսաւորիչը և այլն» (Մենք կը գերադասէինք և այլն խօսքի տեղ (երես 106) որոշ անուններ, եթէ կան)։ Այդ ամենից յետոյ հեղինակը առաջ է բերում օրինակներ ատենական գործերից, «որպէս զի ցոյց տուած լինենք, թէ մեզ մօտիկ անցեալում և ներկայումս ամուսնական հաս ու չը հասի խնդիրներն որպիսի վճիռներ են առել և առնում։ Այդ օրինակներից բղխող եզրակացութիւնը այն է, որ այդ վճիռները իրար հակասում են և որ գլխաւորն է՝ այդ հակասութիւնների հիմքը «անտգիտութիւնը չէ», (երես 130), այլ մամոնային երկրպագելը։ Շատ բերելիք կերպով այդ արտայայտում է հեղինակը այս ասացուածով թէ՝

Եօթը ֆլորին, սիսլտակ ջորին,
Մեռնի կինն, առնի քենին,

որ և կազմում է Զ. գլխի տխուր ընթանը։

Հաս ու չը հասի խնդրի մասին եթէ հեղինակը նոր վարդապետութիւն չի քարոզում, բայց և այնպէս

նոյա կողմից երևում է հակումն՝ չը-հաստատեան աստիճանները չատ հեռուն չը տանել, այլ բաւականանալ միայն 4-րորդ աստիճանով։ Գրքի երկրորդ մասը խորագրած է՝ Լուծումն ամուսնութեան։ Դա՝ մարդու և կնոջ իրարից բաժանելու և կրկին ամուսնանալու խնդիրն է։ Այստեղ սրբազան հեղինակը հաստատում է, որ «Հայաստանեայց Եկեղեցին ամուսնութիւնը լուծանելի է համարում լաւնի պատճառների համար», որով հաստատում է մեր արդէն մատ մի տարի առաջ լայտնած հայեացքը թէ Հայաստանեայց Եկեղեցին ապահարզանը սկզբունքով ընդունում է («Մուրճ» 1890 թ., № 2, Ամսւայ քրոնիկ Լուսինիի)։ Այդ հայեացքը, մեծ կարևորութիւն է ստանում չնորհիւ Գէորգ Դ. կաթողիկոսի 1875 թ. յունուարի 4-ին Սինոդին տուած կոնդակի, որի մէջ «պսակն հրատարակւում է անլուծանելի» իբր թէ «Ըստ կանոնաց Հայաստանեայց Եկեղեցւոյ»։ Այս մէկ կէտը հաստատելուց յետոյ, հեղինակը ատենական գործերից օրինակներ է բերում ցոյց տալու համար ատենական վճիռների հակասութիւնները և վճիռների անհիմն պատճառաբանութիւնները։

Գրքի այդ երկրորդ մասը աւելի կարճ է քան առաջինը, խնդրի աւելի մեծ պարզութեան պատճառով։ Այդ իսկ երկրորդ մասում սրբազան հեղինակը անաչառ կերպով լայտնում է իրան պաշտպան ոչ միայն հայկական իրաւունքի՝ ամուսնութեան լուծանելի լինելուն, այլ և այն հայեացքի որ ամուսնութիւնը լուծելու մի խընդիրք կարող է վճռուել ոչ երբէք Սինոդից, այլ միմիայն Հայոց Կաթողիկոսից։

Արիստակէս սրբազանը վերջացնում է իւր աշխատութիւնը առաջարկելով, որ մի ազգային-եկեղեցական ժողով գումարի իւր չոչափած խնդիրների մասին պարզ, որոշ և դոհացուցիչ օրէնդրութիւն տալու համար «որ պատկառելի և ակնածելի լինէր ամենուրեք բնական հայ ժողովրդի համար»։ Բայց մենք պէտք է խոստովանենք, որ սրբազան հեղինակը իւր այդ գրքով վիճելի խնդիրները պարզորոշ չի դնում։ Հաս ու չը հասի խնդրի մասին նա չի լայտնում որ և է նոր հայեացք, կամ չի անում մի նոր առաջարկութիւն, այլ միայն պաշտպան է հանդիսանում զուտ օրինականութեան որի աղբիւրը նա եկեղեցական ժողովների մէջն է տեսնում։ Բայց թէ նոր եկեղեցական ժողովը այդ խնդրի նկատմամբ ինչ նոր առաջարկի առջև պիտի կանգնած լինի—այդ գոնէ չի երևում գրքից։ Ամուսնութեան լուծման մասին նմանապէս սրբազան հեղինակի գիրքը չի պարունակում նոր նիւթ մի ժողովի համար, որովհետև ինքը պաշտպանում է միայն մի հայեացք, որը Հայաստանեայց Եկեղեցու դարաւոր օրէնքն է։ Գէորգ Դ-ի հակառակ կոնդակը այդ մասին ի հարկէ չի կարող պարտաւորիչ լինել Հայաստանեայց եկեղեցու համար։ Մեզ թւում է թէ այս գրքում Արիստակէս սրբազանը մի իսկապէս չատ լուրջ խնդիր է չոչափում, այդ՝ եկեղեցական վարչական մարմնի առողջացնելու խընդիրն է, որին ձեռնամուխ լինելուն

մեծապէս կը նպաստէ նոյն իսկ հայոց մի եպիսկոպոսի այս հրատարակութիւնը։

Բայց, որպէս ասացինք, մեզ հարկաւոր կը լինի դեռ ևս վերադառնալ այս հետաքրքրական գրքին, որ իւր բոլոր մասերում համահաւասար կերպով դիւրութեամբ չի կարդացւում, պարունակելով իւր մէջ բազմաթիւ և չաճախ երկար գրաբառ քաղուածքներ ոչ միշտ դիւրըմբռնելի ոճով գրուած։

Ա. Ա.

---

## ՆՈՐ ՍՏԱՑԻԱԾ ԳՐՔԵՐ

1) ՆԱՄԱԼԵԱՆ, ԱԼԵՔՍԱՆԴՐ.—«ՀԱՐԵՒԱՆՆԵՐ» (*կեանքի գծեր*)։ *Արտատպուած «Մուրճ» ամսագրից։ Թիֆլ.*, Տպ. *Ռոտինեանցի*, 1890 *թ.*, *գինն է* 3 *կոպ.*—

2) ՂԱՐԱԳԵՈԶԵԱՆՑ, ՑԱՐՈՒԹԻՒՆ.—«ՍԵՒ-ԼԵՌՆՑԻՒՔ» (*մի տոհմագրական պատկեր*), *արտատպուած «Մուրճ» ամսագրից։ Թիֆլ.*։ Տպ. *Ռոտինեանցի*, 1890 *թ.* *գինն է* 10 *կոպ.*—

3) ՄԱԼԽԱՍԵԱՆ, Ստ.—«ԳՐԱԲԱՌԻ ՀՈԼՈՎՈՒՄԸ, ԽՈՆԱՐՀՈՒՄԸ և ՆԱԽԴԻՐՆԵՐԸ»։ *Հրատարակութիւն կենտրոնական դրավաճառանոցի։ Թիֆլ.* Տպ. *Մարտիրոսեանցի*, 1891 *թ.*, *գինն է* 25 *կոպ.*։

4) ՍԵԴՐԱԿԵԱՆ, ԱՐԻՍՏԱԿԷՍ *եպիսկոպոս.*—ԱՄՈՒՍՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ։ *Մոսկւա, տպ. Մ. Բարխուդարեանի*, 1891 *թ.*, *գինն է* 1 *ր.*։

5) ՆԱՄԱԼԵԱՆ, ԱԼԵՔՍԱՆԴՐ.—«ՄԻՆԱՍԻ ԵԶԸ» (*գծեր կեանքից*)։ *Արտատպուած «Մուրճ» ամսագրից։ Թիֆլիս*, 1891 *թ.*, *տպ. Ռոտինեանցի*, *գինն է* 3 *կոպէկ*։

6) ՓԱՓԱԶԵԱՆ, Վ.—«ԽԱԹ-ՍԱՐԱ» (*հայ բոյսերի կեանքից*)։ *Արտատպուած «Մուրճ» ամսագրից։ Թիֆլիս*, *տպ. Ռոտինեանցի*, *գինն է* 15 *կոպ.*։

---